ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

ՊԱՏՐԻԱՐՔ ՆԻԿՈԴԻՄԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՌՈՒՄԻՆԻԱ

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 9 նոյեմբերի (ՏԱՍՍ).— Դեմոկրատական պատրիարքների բլոկի մամուլը ընդարձակ կերպով նշեց Ռումինիայի պատրիարք Նիկոդիմի վերադարձը, որն երեկ Բուխարեստ ժամանեց իր դեպի Մոսկվա կատարած ուղևորությունից հետո։ Կայարանում պատրիարքին դիմավորեց կառավարության անդամների մի խումբ՝ դոկտոր Պետրու Գրոզայի և Տատարեսկուի գլխավորությամբ, նմանապես նաև Ռումինիայում ՍՍՌՄ-ի դեսպանորդ ընկ. Քավթարաձեն։

Կայարանում պատրիարքը ռումինական մամուլի ներկայացուցիչներին հետևյալ հայտարարությունն արեց. «Ռումինական եկեղեցական պատվիրակության այցելությամբ Մոսկվա՝ վերանորոգվում են տասնյակ տարիներով խզված այն սերտ կապերը, որոնք գոյություն ունեին ռումինական և ռուսական եկեղեցիների միջև։ Ես հավաստիացա,— ասաց պատրիարք Նիկոդիմը,— որ ՍՍՌՄ-ում երաշխավորված է պաշտամունքների ազատությունը, որ պրավոսլավ եկեղեցին օգտվում է պետական իշխանության ուշադրությունից ու աջակցությունից, շնորհիվ նրան, որ պրավոսլավ հոգևորականությունը կարողացավ նոր ժամանակի ռիթմին լծվել»։

Պատրիարք Նիկոդիմն ընդգծեց նաև, որ ռումինական եկեղեցական պատվիրակության այցելությունը շատ լավ տպավորություն է թողել ՍՍՌՄ-ի բոլոր եկեղեցական ու հասարակական շրջաններում։ «Մենք չենք կասկածում, որ մեր այցելությունը լայն չափով օժանդակեց ոչ միայն մեր եկեղեցիների, այլ և մեր ժողովուրդների մերձեցմանը։ Մեր տեսակցությունը Նորին Վեհափառություն պատրիարք Ալեկսիի, Մոսկվայի միտրոպոլիտ Նիկոլայի և ռուսաց եկեղեցու մյուս բարձրաստիճան հոգևորականների հետ չափազանց սրտանց էր։ Մենք չափազանց հիացած ենք սովետական կուլտուրայի ու քաղաքակրթության մեր բոլոր տեսած հաջողություններով»։